ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/40

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Լ. Հովսեփյանի (լիազորագիր տրված՝ 18.06.2019թ.)

Հ. Դալլաքյանի (լիազորագիր տրված՝ 18.06.2019թ.)

Քննելով ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից 14.06.2019թ. ներկայացված և 14.06.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը (հետայսու նաև՝ Ա/Ձ) 14.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

Ա/Ձ-ն հայտնել է, որ ս/թ. մայիսի 24-ին ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարել է համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարություն և հրավեր: Ա/Ձ-ն 31.05.2019թ. հայտ է ներկայացրել նշված ընթացակարգին մասնակցելու համար: 03.06.2019թ. ստացել է արձանագրություն, որի մեջ 12, 13 և 15-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ-ի կողմից ներկայացված առաջարկները եղել են ավելի բարձր քան նախահաշվային գները: Համաձայն գնումների օրենսդրության պահանջների Ընթացակարգի համակարգողը պետք է կասեցներ նիստը և Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանին հրավիրեր բանակցությունների: Հաշվի առնելով, որ ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի համակարգողը չի պահպանել օրենսդրության պահանջները և ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով:

Ա/Ձ-ն ներկայացված բողոքով խնդրել է ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.06.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.06.2019թ. թիվ 2452-185 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից ներկայացվել է բողոք: Նշված չափաբաժինների մասով ներկայացված գինը գերազանցում էր նախահաշվայինը, մասնակիցը չի կանչվել բանակցությունների: ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 բողոքի քննության պատճառով պահանջվել էր ընթացակարգը կասեցնել:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի դիրքորոշումն այն է, որ Ա/Ձ-ին ծանուցել գների իջեցման շուրջ բանակցությունների:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.06.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցություն, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի

ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է հատկյալ գնային առաջարկները՝

չ.հ.	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գինը /ԱԱՀ-ով/	Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյան /Առանց ԱԱՀ/
12	Համակարգչային մկնիկ լարով	20 000	32 000
13	Սնուցման բլոկ	28 000	32 000
15	Անխափան սնուցման սարք 2	34 500	35 000

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինները հայտարարել է չկայացած:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի 14.06.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 բողոքի քննության շրջանակներում ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից հայտնած դիրքորոշումը և 28.06.2019թ. թիվ 2452-185 գրությունը, «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հրացման հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, ***բացառությամբ***՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր

***մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար* նախատեսված ֆինանսական միջոցները**: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.5 ենթակետով սահմանվում է, որ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 7.1 կետի 1-ին ենթակետով նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Նույն կետի 7.6 ենթակետով սահմանվում է, որ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ **եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն**

ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. **առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),**

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. ***բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած***:

Այսպիսով, ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և

օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է հատկյալ գնային առաջարկները՝

չ.հ.	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գինը /ԱԱՀ-ով/	Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյան /Առանց ԱԱՀ/
12	Համակարգչային մկնիկ լարով	20 000	32 000
13	Սնուցման բլոկ	28 000	32 000
15	Անխափան սնուցման սարք 2	34 500	35 000

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինները հայտարարել է չկայացած:

Պատվիրատուի ներկայացուցիչը ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի ժամանակ հայտնել է, որ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից Ընթացակարգի 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժնների մասով ներկայացված գները գերազանցում էին նախահաշվային գները, ուստի մասնակիցը չի հրավիրվել բանակցությունների:

Այսպիսով, ուսումնասիրելով բողոքի առարկա հանդիսացող Ընթացակարգի 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժիններով Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից ներկայացված գնային առաջարկները և նույն չափաբաժինների համար սահմանված նախահաշվային գները, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելով, այն պայմաններում երբ առկա է բանակցություններ վարելու իրավական հիմքը, գործել է Օրենքի 38-րդ հոդվածի,

Ընթացակարգի հրավերի 7.5-րդ և 7.6-րդ ենթակետերով սահմանված պահանջների խախտմամբ, հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև ***բանակցություններն արգելվում են***, ***<u>բացառությամբ</u>***՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ **եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած *գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:*** Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) սույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

Ընթացակարգի հրավերի 7.6 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ **եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը** կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Վերը նշված իրավական կարգավորումներով հստակ սահմանվում է, որ արգելվում է գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցությունները՝ սահմանելով բացառիկ դեպքեր, որոնք սպառիչ թվարկված են Օրենքի վերը նշված հոդվածով:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Պատվիրատուն առանց գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու, այն պայմաններում երբ Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից ներկայացված գնային առաջարկները 12-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժինների մասով գերազանցում են նույն չափաբաժինների մասով ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գները, ընթացակարգը հայտարարել է չկայացած: Մինչդեռ Ընթացակարգի հրավերի 7.6-րդ կետի «զ» պարբերությամբ հստակ սահմանվում է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում Պատվիրատուն Ա/Ձ-ին չհրավիրելով գների նվազեցման շուրջ բանակցությունների, այն դեպքում երբ բանակցություններ հրավիրելը բխում է Օրենքի 38-րդ հոդվածի պահանջներից, գործել է ոչ իրավաչափ:

Ինչ վերաբերում է Ընթացակարգը չկայացած հայտարարելու Բողոքաբերի պահանջին, ապա սույն մասով արձանագրում եմ, որ նշված պահանջը չի հանգեցնում բողոքով բարձրացված հարցի լուծմանը, ուստի գտնում եմ, որ բողոքի պահանջը՝ հետևաբար նաև բողոքը, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից 14.06.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**